

Կարծիք

Արսեն Հարությունյանի «Միջնադարյան Տաթևը և նրա գրավոր-մշակութային ժառանգությունը» խորագրով ատենախոսության վերաբերյալ

Միջնադարյան վանքերի հիմնադրման, կառուցապատման, ճարտարապետական, քանդակային, վիմագրական, որմնանկարչական մանրամասները, վանական տնտեսության նկարագիրը, վանքապատկան հողահանդերի և բնակավայրերի վավերացումն ու փոխհարաբերությունները և բազմաթիվ նման այլ նկարագրություններն ու քննությունները միջնադարյան հայագիտության կարևոր բաղկացուցիչներն էին: Վանքանկարագրությունն սկսած վաղմիջնադարյան պատմիչներից մինչև 19-րդ դարի հայ ճանապարհորդները եղել է հայագիտական քննությունների կարևոր դրսևորումներից մեկը: Այսօր շատ դժվար է ցուցել որևէ նշանավոր վանք, որը քանիցս նկարագրված-ներկայացված չէ: Եթե դրան հավելենք նաև հատկապես 20-րդ դարի բազմաթիվ տեղագրական, ճարտարապետական, վիմագրական և պատկերագրական քննությունները, ապա կարելի է ասել, որ առանձին վերցրած որևէ վանքի, հատկապես հանրահայտ, հետազոտության նախաձեռնությունն արդեն իր մեջ լուրջ թնջուկ է պարունակում. հնարավոր է՝ արդյոք խուսափել կրկնություններից և կարելի է՝ արդյոք առաջարկել քննության տեսական և մեթոդաբանական այնպիսի մոտեցումներ, որոնք հնարավորություն կտան վանքը հանել իր մեկուսացումից, ինչը պատմականորեն նրա հիմնական գոյատևման առիավատչյան էր, և այն ներկայացնել միջնադարյան աշխարհընկալման, դավանական վայրիվերումների ու կենսընթացի շատ ավելի տարողունակ համատեքստում:

Կարծում ենք՝ հենց այս վերջին մոտեցումներն են պայմանավորել ատենախոսի հիմնական տեսական ու մեթոդաբանական նորամուծությունները, որոնք էլ հնարավորություն են տվել քննելու միջնադարյան նշանավոր վանքերից մեկը՝ Տաթևը, ընդգրկելով շատ ավելի ընդարձակ աղբյուրագիտական հենք և թեմատիկ բազմազանություն (հիմնավորումներ՝ էջ 7-9, սեղմագիր՝ 9-10): Ուշագրավ է, որ ատենախոսն

այն համարում է «հայագիտությանը ցարդ անհայտ մի նոր գիտաճյուղ, այն է՝ տաթևագիտություն», ինչն իմ կարծիքով ավելի շատ տուրք է սիրած թեմային, քան լուրջ գիտական հիմնավորում: Այլապես սպասելի է մոտ ապագայում ունենալ սանահնագիտություն, հաղպատագիտություն, դադիվանքագիտություն և այլն:

Աշխատանքի ներածությունը (էջ 4-19, սեղմագիր՝ էջ 3-5) բավարար չափով քննարկում-ներկայացնում է հետազոտության արդիականությունը, խնդիրները, մեթոդաբանությունը: Այստեղ նախ կարևորվում է աղբյուրագիտական բազայի լուրջ ընդարձակումն ի դեմս վիմագրերի և ձեռագիր հիշատակարանների: Եթե վիմագրերի դեպքում պիտի հատուկ շեշտել դրանց աուտենտիկության մեթոդաբանությունն ի դեմս կանոնակարգված, ամբողջական ու ճշգրիտ ընթերցումների, հիշատակարանների դեպքում ինքնին նորույթ է նման համառոտ, յուրատեսակ աղբյուրների ներառումը, ինչն ակնհայտորեն հնարավորություն է տալիս ստեղծել շատ ավելի ընդարձակ, մանրամասն, պատմականորեն շատ ավելի ադեկվատ համատեքստ:

Աշխատանքի առաջին գլուխը, որ վերնագրված է «Տաթևի վանական համալիրը և վիմական արձանագրությունները» մի ընդարձակ ներածություն է, ուր ներկայացվում են վանքի անվան ավանդույթները, շինարարական փուլերը, կառույցների ճարտարապետական նկարագիրը, քանդակային հարդարանքը, որմնանկարչությունը, կոթողային մշակույթը, եկեղեցական արձանագրակիր առարկաները և այս ամենը, իհարկե, արձանագրական տեղեկությունների մանրամասն քննության հիման վրա: Մոտ 130 էջ զբաղեցնող այս գլուխն ակնհայտորեն էնցիկլոպեդիկ բնույթ է կրում՝ ամեն ինչ Տաթևի ընդհանրական ընկալման մասին: Բայց և շեշտենք, որ որոշ հանգույցներ և մանրամասներ (Եվստաթեոսին վերագրվող հուշակառույցը, ճոճվող սյունը, վերդարպապա եկեղեցին, վաղ խաչքարերը, Գրիգոր Տաթևացու մատուռ-դամբարանը և այլն) միանգամայն օրիգինալ քննություն են և նորույթ հայագիտության մեջ: Հատկապես գնահատելի է վերդարպապա եկեղեցու և ստորոտում գտնվող տապանաբակի համադիր քննությունը միջնադարյան եզակի եկեղեցի-դամբարանների համատեքստում:

Ատենախոսության երկրորդ գլուխը, որ վերնագրված է «Տաթևի վանքը՝ գրչության և ուսումնագիտական կենտրոն», իր շարադրանքի մեթոդաբանությամբ շատ նման է առաջին գլխին: Անշուշտ, այլ է աղբյուրագիտական հիմքը և այլ են թեմաները: Ես հատուկ կառանձնացնեի Տաթևում ստեղծված ձեռագիր մատյանների համարյա անուն առ անուն քննությունը, դրանց թվաքանակի ճշտումը: Եվ հատուկ ուզում եմ շեշտել Տաթևի վարդապետարանին և համալսարանին նվիրված ենթագլուխը (էջ 186-198), ուր մանրամասնվում են հատկապես համալսարանի թափառումները տեղից-տեղ, պայքարը ունիթորության դեմ, և շեշտվում-կարևորվում են Գրիգոր Տաթևացու դերակատակումն ու համալսարանի տաթևյան ժամանակը, դասավանդման տեսական ու մեթոդական մանրամասները, դասախոսական կազմը և այլն: Սպասում էի, որ այս փաստագրական քննությունը կներառեր նաև ընդհանրապես մոնղոլական տիրապետության շրջանում հայկական համալսարանի ֆենոմենը, մանավանդ, որ Գլաձորն ու Տաթևը նման հիմք են տալիս: Հուսանք, որ ապագայում հեղինակը կանդրադառնա և այս խրթին, բայց խիստ ուշագրավ թեմային:

Կարող եմ վստահաբար վավերացնել, որ աշխատանքի նորարարական ամենամեծ բաժինն ընկնում է երրորդ գլխին, որը վերնագրված է «Որոտանի կիրճի՝ Տաթևի վանքապատկան հին գյուղատեղերի պատմամշակութային ժառանգությունը»: Միանգամից ասեմ, որ ես այն կձևակերպեի ուղղակի «Տաթևի վանքապատկան գյուղերի պատմամշակութային ժառանգությունը», այսինքն՝ կնախընտրեի գյուղատեղի փոխարեն ուղղակի գյուղը, որովհետև խոսք է գնում հենց վանքապատկան գյուղերի և բնակավայրերի պատմական կերպարի, գործառույթների և վանքի հետ ունեցած փոխհարաբերությունների մասին, այլ ոչ թե դրանց ավերակների: Այլ խնդիր է, որ այդ ավերակների ուսումնասիրությունը, ինչը գերազանց ձևով կատարել է ատենախոսը, միտված է և օգնում է վերականգնել վանքի և վանքապատկան բնակավայրերի փոխհարաբերությունները դրանց ակտիվ կենսընթացի պայմաններում: Նույն ձևով էլ խորհուրդ կտամ հրաժարվել այդ գյուղերը *հ/հն* ածականով բնորոշելուց (Հին Շինուհայր, Հին Հալիձոր, Հին Խոտ և այլն, էջ 218 և հջրդ.), քանի որ այդ բնակավայրերն իրենց բուն

գործառույթի ժամանակ հին չեն կոչվել: Դառնալով բուն քննությանը՝ ես այն կհամարեի թեթև հնազիտության լիարժեք քննություն, երբ պատմական սկզբնաղբյուրների մանրամասն, չեզոք ու աուտենտիկ տվյալները համադրվում են ներկա ավերակների, հետքերի ու մնացորդների տեղագրական, ճարտարապետական, պատկերագրական և վիմագրական վկայությունների հետ՝ միասնական քննության երկու գործիքները: Խորհուրդ կտայի հենց համադիր քննության արդյունքում մի փոքր ավելի մանրամասն ներկայացվեին և հստակեցվեին վանք-հարկատու գյուղ փոխհարաբերությունների մեխանիզմները պատմական հոլովությամբ:

Մի յուրօրինակ քննության դրսևորում է չորրորդ գլուխը՝ «Տաթևի վանքին հարակից փոքր եկեղեցիները»: Սա համարյա միկրոսկոպիկ աշխատանք է, ուր հաշվի են առնվում, քննվում և իմաստավորվում մատենագրական, ճարտարապետական ու արձանագրական մանրամասները. ընդ որում, ինչպես նախորդ գլուխներում, այստեղ էլ բազմաթիվ են հեղինակի կողմից առաջին անգամ գիտական շրջանառության մեջ դրված արձանագրությունները: Ուզում եմ հատուկ շեշտել ատենախոսի վիմագրագիտական բացառիկ հմտությունները, արձանագրական տեքստն ընկալելու և վերարտադրելու վարպետությունը:

Իր բազմակողմանիությամբ, քննվող հարցերի խորությամբ առաձնանում է նաև վերջին՝ հինգերորդ գլուխը՝ վերնագրված «Անապատական շարժման վերագարթոնքը Սյունիքում»՝ ներկայացված համաքրիստոնեական անապատական շարժման ներածական ետնախորքի վրա: Հատուկ գնահատելի են նորությային թեմաներն ու հատվածները, ինչպիսիք են, օրինակ, Խնածախի մեղիքության առաջնակարգ դերակատարման մանրամասնումը Հալիձորի անապատի հիմնադրման գործում կամ Տաթևի Մեծ անապատի համակողմանի ներկայացումը՝ հիմնումը, գործունեությունը, կառույցներն ու դրանց մանրամասները:


Ուզում եմ հատուկ շեշտել աշխատանքի ցուցադրական-տեխնիկական ներկայացման մանրամասն ու ընդօրինակելի կատարումը՝ արձանագրական տեքստերը,

բայց հատկապես գրչագրերը ու գծանկարները, լուսանկարները, որոնք ներառված են 250 էջանոց հավելվածում:

Եզրակացնենք: Սա մեծ աշխատանք է, մանրամասն և լուրջ աշխատանք է, որ կատարվել է ոչ միայն աղբյուրների ու առկա հետազոտությունների գերազանց իմացությամբ, այլ նաև արձանագրական-ձեռագրական-պատկերագրական քննության մեթոդների հնարավոր բազմազանության ներառմամբ: Ինձ մոտ այն տպավորությունն է, որ Արսեն Հարությունյանի շարադրանքը մի ուշագրավ ճափորդություն է՝ ոչ միայն դեպի պատմության խորքերը, այլ նաև դեպի մերօրյա հուշարձանները, որոնք միաձուլում և երևակում են այդ պատմությունը:

Կարծում եմ՝ հեղինակը միանգամայն արժանի է իր հայցած՝ պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճանին:

Պաշտոնական ընդդիմախոս՝ պ. գ. դ., պրոֆեսոր  Համլետ Պեսրոսյան

Պ. գ. դ., պրոֆեսոր Համլետ Պեսրոսյանի ստորագրությունը հաստատում եմ՝
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի
փոխտնօրեն՝  Տոքս Զելյան

18 հոկտեմբերի 2025 թ.

